

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՔԱՐՈԶԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԿԱԹՈՂԻԿԵ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՏՈՆԻՆ
(13 հուլիսի 1993 թ.)

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն»
«Էջ Միածին ի Հօրէ և լոյս փառաց ընդ նմա».
Սիրելի հավատացյալներ,

Այսօրվա շաբաթվանը երգում է հրաշքը Փրկչի՝ մեր Հիսուսի Քրիստոսի իջմամբ Աբրահամյան դաշտ ու նրա հետ փառքը լույսի: Այս փառաբանական երգը նվիրված է մեր այս Ս. Տաճարին, որտեղ գտնվում ենք այս պահին և աղոթում ենք միասին: Մեր ժողովրդի պատմության մեծագույն իրադարձությունը, հոգևոր իմաստով, հանդիսացավ 301 թվականին հայ ժողովրդի քրիստոնեացումը, հայ ժողովրդի մկրտությունը և Հայաստանի հրոչակումը իբրև ազգային պետական կրոնք: Պատմությունը հայտնի է մեզ բոլորիս, որ մինչև 301 թ. հայերը թեև ապրում էին իբրև ժողովուրդ և ունեին անփակաց պետություն, բայց չունեին անփակաց ազգային կրոնք: Նրանք պաշտում էին չաստվածներ, որոնք փոխառություններ էին դրացի պետություններից՝ թե՛ Պարսկաստանից և թե՛ հնթանոսական Հունա-Հռոմեական պետությունից: Քրիստոսի ծնունդից ու հարությունից հետո, 300 տարիներ շարունակ սուրբ առաքյալները Հիսուսի Ավետարանի լույսը տարածել էին աշխարհի բոլոր ծագերում, մանավանդ Հռոմեական կայսրության տարածքի վրա: Նաև Հայաստան թափանցել էր այդ լույսը Ս. Թադեոս և Ս. Բարդուղիմեոս առաքյալների միջոցով: Թեև քրիստոնեությունը հալածվում էր ամեն տեղ, նաև Հայաստանում, սակայն ի վերջո Հայաստանում հաղթանակեց քրիստոնեական կրոնքը և 301 թվականին, ինչպես ասացի, մեր ժողովուրդն ընդունեց ճշմարիտ նոր կրոնը, Տրդատ Գ. թագավորի օրոք և Ս. Գրիգոր Լուսավորչի ջանքերով: Այսպիսով Հայաստանը դարձավ աշխարհի առաջին քրիստոնյա պետությունը, և երկու տարի հետո կառուցվեց այս տաճարը, համաձայն Գրիգոր Լուսավորչի մի տեսիլքի: Մի գիշեր, աղոթքի պահին, Սուրբ Գրիգորը մի տեսիլք ունեցավ, թե Հիսուս Լույսի կերպարանքով իջավ երկնքից և ոսկյա Մուրճը ձեռքին ցույց տվեց, որտեղ պետք է կառուցվի առաջին հայկական քրիստոնեական տաճարը, այսինքն այս տա-

ճարը։ Սճա թե ինչու այս տաճարը կոչվում է Էջմիածնի տաճար, որովհետև Միածինը, այսինքն Հիսուս Քրիստոս այստեղ իջավ լուսեղեն կերպարանքի ներքո և ցույց տվեց կառուցվելիք տաճարի վայրը։ Այսպիսով աճա, 303 թվականին, ուղիղ 1690 տարիներ առաջ, կառուցվեց այս տաճարը, Գրիգոր Լուսավորիչ իր Ս. Աջով օծումը կատարեց, առաջին պատարագը մատուցեց բազմաճաշակ ժողովրդի ներկայության, ուխտավորներ, որոնք եկել էին պատմական Հայաստանի բոլոր շրջաններից։ Սճա այս եղելությունը, այս իրադարձությունը մեծագույն հրաշքն է հանդիսանում մեր բազմադարյան պատմության ընթացքում։

Բայց շարականագիրն ասում է, որ ոչ միայն Հիսուս իջավ այստեղ, այլ նաև լույսի փառքը։ Այս խոսքը վերաբերում է ոչ թե նյութական արևի լույսին, այլ հոգևոր լույսին։ Եվ իրոք, քրիստոնյա դառնալով հայ ժողովուրդը վերածնունդ ապրեց հոգեպես, դարձավ նոր ժողովուրդ, Ս. Գրքի ժողովուրդ, Ավետարանի ժողովուրդ, Քրիստոսի Ավետարանի լույսով նա կերպարանափոխեց իր ողջ էությունը, իր հոգևոր աշխարհը, դարձավ ստեղծագործ ազգություն, դարձավ ոչ միայն քրիստոնեական հավատին փառած ժողովուրդ, այլ նաև քրիստոնեությունը ստեղծագործորեն ապրող ժողովուրդ։

Եվ իրոք, հազիվ հարյուր տարի անց քրիստոնեությունն ընդունելուց, հայ ժողովուրդն ապրեց իր մշակութային կյանքի ոսկե դարը՝ Ե դարը մեր պանծալի։ Վերջնականապես գեղեցկորեն ձևավորվեց մեր մայրենի լեզուն, ստեղծվեցին հայ տառերը Ս. Մեսրոպի ձեռքով, թարգմանվեց ամբողջ Ս. Գիրքը թարգմանիչների ձեռամբ, Սուրբ Էջմիածնում առաջնորդությանը ներքո Ս. Մեսրոպի և Ս. Սահակ Հայրապետի։ Եվ ավելին, Նույն Ե դարում, ու հետագայում, կազմավորվեց մեր ազգային ինքնությունը պետությունը հայկական՝ սկիզբ առավ ու զարգացավ մեր ճարտարապետությունը, մատենագրությունը, հայ երաժշտությունը և բոլոր հայկական արվեստները։ Ավելին, կազմավորվեց հայ ժողովրդի բարոյական նկարագիրը ու հայրենասիրական ոգին։ Սճա այս բոլորը միասին հանդիսանում են իմացական հոգևոր-ազգային ծաղկումի մի դարաշրջան, որ մենք կոչում ենք ոսկե դար։ Որովհետև, մեր ժողովուրդը ոչ միայն առաջին քրիստոնյա պետությունը ստեղծեց, այլ նաև Քրիստոսի լույսով՝ ինքնուրույն ազգային մշակույթի արժեքներ։

Հելլենները իրենց ոսկե դարը, փառավոր ոսկե դարը, ստեղծել էին Քրիստոսից հինգ հարյուր տարի առաջ, որ ոչինչ ունի անշուշտ քրիստոնեական, բայց մեր ժողովուրդը քրիստոնեությունը ընդունելով, իր ոսկե դարը ստեղծեց։ Եվ վերջապես՝ Էլի Քրիստոսի լույսով ու անմահության հավատով հայ ժողովուրդը առաջին մարտը մղեց ընդդեմ հեթանոսության, վասն Հիսուսի և վասն հայրենիքի ազատության, Վարդանանց պատերազմին, 451 թվականին։

Սճավասիկ, սիրելի հավատացյալ ժողովուրդ, ինչպես Քրիստոսի լույսով, այդ լույսի փառքով, ինչպես շարականագիրն է ասում, հայ ժողովուրդը քրիստոնյա պետություն ստեղծեց, մի նոր քրիստոնեական մշակույթ հորինեց և վերջապես քրիստոնեական հավատքի համար առաջին մարտը մղեց։

Այսօր էլ թեև անցել են 1690 տարիներ, այսօր էլ մեր ժողովրդի համար քրիստոնյա լինելը փառքի տիտղոս է։ Մենք հակառակաց կարող ենք պարծենալ աշխարհի առաջ, քրիստոնյա աշխարհի առաջ, մեր քույր եկեղեցիների առաջ։ Այս ժառանգությամբ է, որ մենք ներկայանում ենք նաև

այսօր աշխարհի առջև: Այս ժառանգությամբ է, որ մենք այսօր բարեկամական սիրո հարաբերություններ ենք մշակում քույր Եկեղեցիների հետ: Այս ժառանգությամբ է, որ մասնակցում ենք, այսպես կոչված, միջազգային եկեղեցական կյանքին, այս ժառանգությամբ է, որ մասնակցում ենք Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի, Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի գործեությանն: Երջանիկ զուգադիպությամբ նրանց ներկայացուցիչները գտնվում են այսօր մեր մեջ և աղոթում մեզ հետ, շուրջ 14 անձնավորություններ, որոնք ներկայացնում են Եվրոպայի տարբեր երկրների քրիստոնյա կազմակերպություններ ու Եկեղեցիներ: Այս առիթով ձեր բոլորի անունով, սիրելի հավատացյալներ, ես ողջունում եմ նրանց ներկայությունն այստեղ: Նրանք եկած են ծանոթանալու մեր Մայր Աթոռ Ս. Էջմիածնին, ծանոթանալու մեր եկեղեցական կյանքին, Հայաստանում այսօրվա դժվարին պայմաններում: Եկած են մեր վիշտը բաժանելու Լեռնային Ղարաբաղի ողբերգական իրադարձությունների կապակցությամբ, եկել են այստեղ եղբայրական օգնության ձեռք երկարելու մեր Եկեղեցուն և մեր կարիքավոր ժողովրդին: Մենք այս առիթով պարտք ենք համարում մեր շնորհակալությունը հայտնել նրանց և աղոթել և մաղթել, որ Աստված հետզհետե զորացնի և ծաղկեցնի Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի այս միջազգային քրիստոնեական հաստատությունը, որին մասնակցում են աշխարհի բոլոր քրիստոնյա Եկեղեցիները: Այդ կազմակերպությունը կարող ենք նմանեցնել Միացյալ Ազգերի Կազմակերպության հետ: ՄԱԿ-ի կենտրոնը Նյու Յորքում է, ինչպես գիտեք, և որը ներկայացնում է մի կազմակերպություն, որին անդամակցում են աշխարհի բոլոր պետությունները, քաղաքական մակարդակի վրա: Իսկ կրոնական մակարդակի վրա, Ժնևի Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդն է հանդիսանում, որպես միջազգային կազմակերպություն:

Սիրելի հավատացյալներ, մեր ողջույնի այս խոսքից հետո, ուղղյալ մեր հյուր եղբայրներին, արտասահմանից ժամանած, աղոթենք, որ Տերը իր իսկ հիմնած Մայր Աթոռը անսասան, անշարժ և միշտ հաղթական պահի, ի փառս մեր քրիստոնեական հավատքին, ի փառս մեր բարեպաշտ ժողովրդին և ի փառս մեր վերածնված անկախ Հայաստանին:

«Ողջ լերուք զօրացեալ Ս. Հոգւով և յաւետ օրհնեալ ի Տեառնէ և ի մէնջ». ամեն: